

## Առաքման և վճարման պայմաններ

### 1. Ծառայությունների ընդհանուր նկարագրություն

Հաճախորդի /այսուհետ՝ Գնորդ/ կողմից հայտը ստանալուց 24 ժամվա /աշխատանքային օրվա ժամեր/ ընթացքում առաքման ծառայությունը կապ է հաստատում Գնորդի հետ և ձևակերպում վերջնական պատվերը: Գնորդի կողմից սխալ և/կամ չգործող կոնտակտային հեռախոսահամար թողնելու դեպքում, ինչպես նաև թողնված կոնտակտային հեռախոսահամարին 2 օրից ավել չպատասխանելու դեպքում հայտը համարվում է անվավեր: Հայտն անվավեր ճանաչվելու դեպքում, Գնորդը կարող է գրանցել նոր հայտ: Ապրանքը կարող է առաքվել առաքման ծառայության միջոցով Պատվերում նշված Գնորդի հասցեով:  
**Առաքումն անվճար է:**

Ապրանքների առաքման ժամկետը Երևանում՝ պատվերի ձևակերպման ամսաթվից երեք աշխատանքային օրվա ընթացքում: Ապրանքների առաքման ժամկետը ՀՀ մարզերում. ՀՀ մարզերի քաղաքային համայնքներ՝ պատվերի ձևակերպման ամսաթվից հինգ աշխատանքային օրվա ընթացքում: ՀՀ մարզերի գյուղական համայնքներ՝ Պատվերի ձևակերպման ամսաթվից տասը աշխատանքային օրվա ընթացքում: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածք կամ արտասահման առաքում չի իրականացվում:

### 2. Առաքում

Առաքումն իրականացվում է շաբաթվա յուրաքանչյուր աշխատանքային (Երկ-Ուրբ) օր 10:00-ից մինչև 18:00 ներառյալ: Առաքման հստակ ժամը համաձայնեցվում է Գնորդի հետ հեռախոսով, որը նշված է Պատվերում: Վաճառողը չի կրում պատասխանատվություն Ֆորս Մաժորային իրավիճակներով պայմանավորված առաքման ժամկետների խախտումների համար:

Ապրանքի առաքման դեպքում այն հանձնվում է Գնորդին կամ անձին, որը Պատվերում նշված է որպես ստացող: Ապրանքի հանձնման ժամանակ առաքման ծառայության աշխատակիցն իրավունք ունի Գնորդից պահանջել ներկայացնել իր անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ նույնականացման քարտ), ինչպես նաև պահանջել նշել ձևակերպված Պատվերի վավերապայմանները (պատվերի համարը, և այլն): Վաճառողը երաշխավորում է Գնորդի անձնական տեղեկատվության գաղտնիությունն ու պաշտպանությունը:

Գնորդի հետ կնքվում է ծառայությունների մատուցման պայմանագիր:

### 3. Վճարման պայմանները

Վճարումը կատարվում է ըստ Գնորդի հայեցողության՝ առցանց / online/, կամ, տեղում՝ ապրանքի ստացման պահին: Վաճառողի կայքում առցանց վճարումը իրականացվում է վճարային համակարգերի միջոցով (Master, Visa, Arca): Ապրանքի ստացման պահին, վճարումը կատարվում է կանխիկ՝ ՀՀ դրամով, պատվիրված ապրանքի ամբողջ արժեքի չափով: Ապրանքը ենթակա չէ փոխանցվելու Գնորդին, վերջինիս՝ ապրանքի գնի վճարումից հրաժարվելու կամ, Գնորդի մոտ, ապրանքի մատակարարման պահին պատվիրված ապրանքի ամբողջական գնի չափով դրամական միջոցների բացակայության դեպքում:

Կայքում առաջարկվող ապրանքների գները վերջնական են /ենթակա չեն փոփոխման/ և ներառում են բոլոր ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը:

#### **4. Պատասխանատվությունը՝ առցանց վճարումների շրջանակներում**

Առցանց վճարում կատարելու դեպքում, ներմուծված տվյալների ճշգրտության պատասխանատվությունը կրում է Գնորդը:

Քարտային վճարումների հետ կապված խնդիրներ ծագելու դեպքում, Գնորդը պետք է դիմի տվյալ քարտը թողարկող բանկին:

<<ԱրմենՏել>> ՓԲԸ –ն /Վաճառողը/ չի կրում պատասխանատվություն ներմուծված տվյալների իրավացիության/ճշգրտության և տեխնիկական խափանումների համար:

#### **5. Այլ պայմաններ**

Սույն պայմաններից ծագած բոլոր վեճերն ու անհամաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ այն դեպքերում, երբ դա հնարավոր չէ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Սույնով, Գնորդը տալիս է իր համաձայնությունը <<ԱրմենՏել>> ՓԲԸ-ից՝ Օպերատորի տարբեր նախաձեռնությունների մասին էլեկտրոնային հաղորդագրությամբ կամ SMS-ով տեղեկություններ ստանալու համար: Միառժամանակ, Գնորդն իրավունք ունի, <<ԱրմենՏել>> ՓԲԸ-ին դիմելով, ցանկացած պահի հրաժարվել իր էլեկտրոնային հասցեին հաղորդագրություններ ստանալուց: